



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 46

— Տ Ե Ր Ա Ր —

12 ՆՈՅԵՄԲԵՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԽԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 ՂԲԸ	Տարեկան 54 ՂԲԸ	Տարեկան 42 ՖԲ.
Վեցամսեայ 25	Վեցամսեայ 27	Վեցամսեայ 6

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

Մ Ե Ս Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ր Ն

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, ձեռքով Պեյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեւուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹԸ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գրհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգէնին արժանացած են:

Հատը 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(Բ. ԱՎԱԴՐԻԱՆ) ՏՐԿՈՒՄԻՆԵ ՄԵԼԵՍԻ — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի Ֆաշիսի քիւ 52



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 46

ԾԱԲԱԹ

12 ՆՈՅԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական. — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ. Անցորդ. — ՍՈԿՐԱՏ ՍԱՐՐԱՖԵԱՆ. Խրափ կցկտր, տղա՛ս, ախանջ տր. — ԹԷՈՂԻԿ. Կանացի հարցեր. — ԲԵՐՈՒՋ ՉԱՏԻԿԵԱՆ. Քննադատ օրագիր (Կերած փառաւոր ծեծս ... փոխան յօդուածի. — ԱՇՈՏ ՔԻԹԱՊԶԵԱՆ. Մայրական սեր. — ՍՏԵՓԱՆ ԽԱՉՈՒՆԻ. Մսածուսներ. — Թ. Մ. ՉԵՐՉԵԱՆ. Նիւթեր ու զաղափարներ. — Հ. ՊԵՏՐՈՍ. Տիկիկը տուն չը հաւնիր. — Գ. Մ. ԱՔՐԱՀԱՄԵԱՆ. Աղջիկը ֆանի՞ով կուտայ (իրական պատմութիւն). — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ. Իմ սերը (ժողովրդական բանաստեղծութիւն). — Ե. ԳՈՒՅՈՒՄՉԵԱՆ. Շաքրունի յուրեր:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Խմբագրականը լրագրութեան մէջ է՛ն նկատելին և օգտակարն է, շինիչը, հրահանգիչը, նամանաւանդ հանդէսներու համար, քանի որ անոնք շարաթը մէկ անգամ միայն կը հրատարակուին, ուստի պէտք է որ մէն մի հանդէս իր առաջնորդող յօդուածը ունենայ, և այդ յօդուածը հիւսուած ըլլայ մեր ընկերական, ընտանեկան, վերջապէս առօրեայ կեանքին մէկ պիտանի դրուագովը: Առաջնորդող յօդուածները, որոնց խմբագրական անունը կուտանք ընդհանրապէս, կը գրուին թերթին խմբագրապետին, անոր կարող մէկ խմբագրին և կամ լուրջ մէկ յօդուածագրին կողմէ, բաւական է որ գրութիւնը ինքնին արժէք մը ունենայ, և զայն կարգացողը մասամբ օգտուի անկէ: Ահա նպատակը խմբագրականին:

Մեր ընկերական, ընտանեկան բարքերուն մէջ արմատացած են այնպիսի ունակութիւններ, սխալ ըմբռնումներ, արտառոց նորոյթներ եւայլն, ու

րոնց համար որչափ խմբագրականներ գրուին՝ նորէն զգալի պարասլ մը կը մնայ, պէտքի պարասլը զոր զգալի է ամէն օր, ամէն գործառնութեան մէջ:

Այս անգամ առնենք, մեր գրական հորիզոնէն նիւթ մը, որ կարծէ խմբագրականի հիւթը ընել, այն է երեկուան խլէզներուն կարծեցեալ գրական գործունէութիւնը:

Մեր գրական ասպարէզին մէջ՝ այն տեսակ գրողներ երեւան ելած են, որոնք գաղտագողի, առանց յայտնելու իրենց բուն իսկութիւնը, լոկ ստորագրութեան մը շնորհիւ այսօր դատաւիտելու կելլան աս ու ան: Միամիտ ընթերցողը, առանց ճանչնալու այդ անձա՛յ յօդուածներուն տակ սողոսկող անձնաւորութիւնը, կոյր զկուրայն հաւատ կընծայէ ատոնց ու կանցնի:

Ես պիտի խնդրեմ իմ գերազնիւ ընթերցողներէս, որպէս զի ըլլայ օրաթերթերու, ըլլայ պարբերականներու մէջ, երբ ստորագրութիւն մը տեսնան իրենց անծանօթ, հարցնեն, փնտռեն և գիտնան թէ ո՞վ է գրողը: Պատրանքը և ծիծաղը շուտ պիտի հասնի, կը վստահեցնեմ զիրենք, և այն յօդուածը, որուն մէջ փորձառու միտք, կարողութիւն, և ուղիղ դատողութիւն մը տեսնուած էր, գրողը մարդակերպ խառնակ մը պիտի ըլլայ անպատճառ:

Ասոնք, այսինքն գրականութեան մէջ ճարակած կարգ մը չուշուռ գրիչներ, Պոլսոյ պարբերականներուն մէջ սլքտկալու տեղ չի գտնելով, սկսած են իզմիրի Հանդէսին քշել իրենց սիրա խառնուուք յօդուածները, որովհետեւ ամէնքս ալ ճանչնալու դժբաղդութիւնը ունինք այդ Պաղունակները:

Ասոնք՝ այսինքն այս կարգի պաղունակներ, որոնց բարոյականը զէնօ՝ և նիւթականն ալ շաբաթը չորս մէծիտէն անդին չ'անցնիր, նորոյթ մը յղացած են իրենց հացը և 30 նոց ծխախոտը ապահովելու համար: Խմբագրատունէ խմբագրատուն կը սլքտկան, տասը զրուշ վճարող տնօրէնին սիկառը վառելու համար սանդուխներ կ'ելեւելն, և գիշերը փոշոտ ֆանաքներու վրայ կանցնեն, և որպէս զի շաբթու գլուխ ստացուած հինգ տասը զրուշը հախ ընեն, նիւթ առնելով երկու տարբեր թերթերու ներքին կազմակերպութիւնը, քրակցութիւն անուամբ հեռաւոր հանգէսի մը աշխատակցութեան կսկսին: Այդ յօդուածին մէջ կոյր զկուրայն կը ջատագովեն իրենց վարիչը, ուղղամիտ, գործունեայ, խելահաս, և թէ, բառարանի մէջ գոյութիւն ունեցող բոլոր ածականները չեն զլանար անոր հասցէին, և իբր թէ (°) ասով վարկաշուրկ ընել կը ջանան հակառակ թերթին տնօրէնը և կամ պաշտօնէութիւնը:

Այս և այս տեսակ գրական չպիտոյ հրատարակութիւններ թէպէտ հիւլէի չափ կարեւորութիւն չեն կրնար ունենալ անձնիւր գիտակցութիւն ունեցող լրջամիտ ընթերցողներու մօտ, սակայն և այնպէս պէտք է նորէն զգուշանալ այդ Պաղունակներէն, որոնց գրութիւնները ընդհանուրին օգտակարութիւն մը չունենալէ զատ՝ գրական գաղափարներ միտակելու կը ծառայեն միայն:

Երբէք չեմ զարմանար թէ ինչո՞ւ այդ տեսակ թղթակցութիւններ կընդունուին լուրջ կարծուած հանգէսներու մէջ, քանի որ գիտեմ թէ՝ ամէն վարիչ իր քսակը և թերթը լեցնելու հակամէտ է: Նա մանաւանդ երբ մըր-

ցակիցի մը դէմ է գրուածքը, ալ աւելի սիրով կը հիւրընկալուի այդ թըղթակցութիւնը:


Այս կարգի Պաղումակներ, որոնց ապրուստը անոր ասոր... միսէն կախում ունի, կրնան ուղածնուն չափ ծամծմել ենթական, բայց լըջախոհ ընթերցողներ, որոնք մօտէն կը ճանչնան այն անունները, որոնց հետ խաղալու փորձեր կընեն այդ Պաղումակները, բնաւ կարեւորութիւն չեն տար:

Ուրախ ենք յայտարարելու թէ՛ այդ կարգի Պաղումակներ բարեբաղդաբար մեր հանդէսներու մէջ չի կրնալով ապրուիլ, իզմիրի հանդէսին մէջ կը փնտռեն իրենց ծամելիքը:

Իբր վերջաբան մեր խմբագրականին, պէտք է ըսենք որ՝ գրականութեան մէջ արտագրեալէն առաջ արտագրողը պէտք է փնտռել, առանց կարեւորութիւն տալու այն կարգ մը Պաղումակ գրուածքներու, որոնց նիւթը անձնական հակառակութիւն է լոկ:

Այս չափը բաւական է կարծեմ իբր դաս, ՊԱՏԻԻ և ԵՐԵՍԻ ԳՈՅՆ ունեցողին համար:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ



Որքան վեհ եր մերին սերը՝ երբ իրար
Քանի մը օր վայելեցիմ, վառեցանք,
Շահամներդ որքան աղուոր կ'երեւար,
Ու կ'ունենար ձեռքերու մեջ մերք սանցանք:

Ապրիլն արդեւ վայելելն է կոյս մ'աղուոր,
Քեզի պէս վեհ, քեզի պէս սուրբ, գեղադիւ,
Որ կը հալի սերի մը մեջ մեղաւոր,
Ինչպէս սոխակն ալ կը հասնի վարդին դիւ:

Ինչո՞ւ հիմա ինծի տեսալ չես ուզեր,
Դո՞ւն որ հոգիս կ'ըսէիր ինձ մերք ընդ մերք.
Որքան շուտով խամրեցաւ քո վարդի սեր,
Որքան կանուխ փեքրեցաւ քերք առ քերք:

Յաւեսական ցաւը կուրաւ հեզ հոգույս,
Մեռելական շուրթիւնով մ'անպատում,
Քայքայուեցաւ արքունիս հալմակ լիպոյս
Հիմա այսպէս՝ քեզ հեռու ու սրտում:

Բոցին շուրջ ինչպէ՞ս վառի մի քիթն,
Ինչպէ՞ս բոցի ոսկի եզակն վարդին քով,
Ինչպէ՞ս գեփիւնն անտառին մեջ շնչի դեռ,
Հոգիս ալ քեզ կը փնտռէ տեղանքով:

Բայց ես անցա՞յ՝ անցորդի պէս անաղմուկ՝
Հեշտանքներու ճամբաներէն անխրոնով,
Զեփիւնի մը պէս անտեղալ խուսափող.
Հեզ անցորդն ալ կ'անցնի՝ սրտի՞ն դնելով:

ԻՐԱՏՔ ԿՑԿՏՈՒՐ,

ՏՂԱՄ, ԱԿԱՆՋ ՏՈՒՐ

Եկո՛ւր որ վառեմ միսֆիդ լաւբարը, յոր-
դոր լեցունեմ գանկիդ աւապարը:

X

Նախ, մի՛ մոռնար շուտ մօրդ բարբա-
ւոր: Ամե՛ն ժառու հշե՛ աշխարհաբառը, իսկ
ժառու՛ն մեջ յիշե՛ գրաբառը:

X

Մանուկին գրօսեմ ե՛ ճորճոր-պարպարը,
չափահասինն ալ՝ կնոջ հետ պարը: Վա՛յ ա-
նոր որ չընտած իր մտախպարը, պարեմ
յետոյ կ'ունենայ ամուսնութեան գաղափարը:

X

Ուսմունքը ճանչցի՛ր խելֆիդ նպարը,
ողջմտութիւնն ալ՝ ձեռֆիդ տպարը: Ա՛յ
անվախ անցի՛ր ճանապարհը, առջիդ երբ
տեսնաս խոշոք ու փապարը:

X

Ընտրե՛ խօսքերուն պայծառը: Ինչո՞ւն
պէտք քե ի՛նչ ե՛ Գիտութեան Ծառը, ծառեն
առաջ ճանչցի՛ր նախ ... թուփն ու մացառը:

X

Աղջիկ մը թոշուն ե՛ չիտ դադարը, ման-
ջըն ալ առ խուշին միակ անձառը: Հուրի
հուրի հա՛ճ հա՛ճ կ'սկսի կիթառը: Օ՛ն,
ան չի դրած իր բառը, աջ ու ձախ շարժե՛
ծառիդ կատարը:

X

Խորհե՛ ու գտի՛ր ճարը, յանիրաւի չի
սեպելո՛ւ համար չարը՝ ան որ քեզ քննա-
դասած ասեմ փրփի անաչառը:

X

Մի՛ զգար խիղերուն անձառը, երբ
քեմեն շէտ մեկու մը ճառը: Ա՛յլ ե՛ տա-
ղանդն, ա՛յլ ե՛ հանձարը: ցորենին արժե՛կն
ունի՞ հաճարը:

X

Կիսն ե՛ օտարը: հոգ չե՛, տո՛ւր անոր
քերթիդ պատարը, բայց տա՛ն առաջ խոս-
տունիդ բառը՝ հաւերե՛ բառիդ, ամե՛ն մեկ
տառը:

X

Սերը յուսինն ե՛, Հոգին ալ՝ երկնակաւարը:
Մարդը գրիչն ե՛, Կիւնը անոր կաղաւարը:

X

«Ամե՛ն բանին յարմարը»: Ա՛ս քե՛.
Կեանքի գիրֆիդ առաջին համարը:

X

Մեկ, մի՛շտ մեկ տեսակ ե՛ տալարը: Կ'եղ-
լայ, գոր օրինակ, զարման հետ շփոթել ա-
մառը, կամ կիրին հետ՝ մարմարը: Իսկ շը-
փոթելին զատ երբ պնդե՛, ճի՛շդ բառն ե՛
«յամառ»ը:

X

Անցո՛ւր խելֆով սնանկ մարդոց տունա-
րը՝ զա՛յն որ իրեն բան գործ ըրած «խու-
մար»ը, կը մտիկ գրպանին գումարը:

X

Բիշաֆին աղե՛կ կուգայ ճաւարը, սի-
րահար գոյգին՝ դուռսի խաւարը, որկրամո-
չին՝ հոխ սեղանի մը աւարը: Փափկասուն
ֆարոգչին չի՛ զար սակայն գաւարը:

X

Լեռան մը դարմարը՝ ունի՛ նաեւ իր
դարմարը: դիրքինը չի սորված մի՛ սորվիր
դժուարը: խելօք ապրե՛ մ'ըլլար ետե՛կն
բշուառը:

X

Պարագային համեմատ՝ փայտը մ'ըլ-
լար, եղի՛ր պիկն ֆարը, կամ ցուրը մ'ըլլար,
եղի՛ր թունդ գառը: կրիան մ'ըլլար, եղի՛ր
ճագարը: լեղին մ'ըլլար, եղի՛ր շափարը:
Ասանկ կը պահանջե՛ կեանքի պայտարը:

X

Գինին երբ չունիս, ի՛նչ պէտք ե՛ տա-
կառը: թոշուն երբ չիկայ, ի՛նչ պէտք կա-
պարը: Մի՛րգը երբ «չիւրիկ» չի՛ լեցո՛ւր
սակառը, յուցկին գրպա՛նդ ե՛ նե շինե՛ սի-
կառը: Ա՛ս ե՛ գործին «ֆիպար»ը:

X

Տունկը չի սկիւծ՝ պահանջել կանկա-
ռը, բնաւ չ'աշխատած՝ երազել ֆանֆարը:
փոխանակ կնոջ՝ պաշտել անոր նկարը: Այս-
ընթացն ունի խելֆով սկարը:

X

Աղջի՞կ, ա՛ս ե՛ ձեռֆիդ ֆնարը: Մի՛
պրկեր շատ, չի փրփի՛ լարը:

X

Ահա՛, տղաս, խօսքերու անկաշառը,
դի՛ր զանոնք գանկիդ նժարը: Բայց յանկե-
րու հասա՛ւ պաշարը: ուրի՛շ շաբթու: ձե-
ռագի՛ր կը ձայնե՛ կոր գրաշարը:

ԹԵՈԴԵԿ

ԿԱՆԱՑԻ ՀԱՐՑԵՐ

Շատ անգամ պատեհութիւնը ունեցած եմ ցաւով կարգալու, ամուսնական կեանքէն քաղուած ընտանեկան բանավէճեր, այր եւ կնոջ միջեւ հակառակութիւններ, գաղափարներու արտառոց յայտնութիւններ, եւ նմանօրինակ տգեղ նիւթերով շաղախուած գրութիւններ, որոնց մէջ՝ միշտ կիներ, միշտ ան է որ պախարակուած, դատաւիտուած եւ իբր տեղի տուող՝ չարաչար քաջբռնուած է:

Այս տեսակ գրութիւններու հեղինակները՝ որոնք, աւելորդ է ըսել մեր հակառակ սեռէն ըլլալով, կարծես մասնաւոր դիտումով մը մղուած տուած են, եւ փոխանակ խնդիրը իր վիճակին մէջ ցոյց տալու, իրենք ալ իրենցմէ կարգ մը խելապատակի ծնունդ մանրամասնութիւններ փարթած, եւ այնպէս ներկայացուցած են հանրութեան:

Այր եւ կնոջ մէջ վէճ մը կը ծագի, կընոջ կը վերագրուի, ամուսինը ալքովի կ'ուտայ ինքզինքը, պատճառը կիներն է կըսեն: Ամուսինը իր գործին մէջ անյաջողութեան անկում մը կ'ուենայ, կրկին կնոջ գլխուն կը փաթթուի պարագան. ամուսինը խաղամոլութեան կը հետեւի, կնոջ երեսէն է կըսեն. ամուսինը զաւակները չը սիրելուն պատճառը կնոջ կը վերագրեն, ամուսինը իր պիւտճէն չի կրնալ կառավարելուն հետեւանօք անանկութեան պատճառը կիներն է, ախ անոր կնիկը... կը բացաքանչեն: Վերջապէս այր մարդուն բոլոր ունակութիւններուն, մոլութիւններուն, խաղներուն պատճառը կիներն է կըսեն, ու զայն կը բամբասեն: Ասիկայ արեւու պէս պայծառ իրականութիւն մ'է որ դժբաղդաբար կը շարունակուի մեր ընտանեկան չըջանակներու մէջ:

Արդ, ինչո՞ւ արդեօք անգամ մը կիներ խօսեցնել չեն տար, ինչո՞ւ խեղճ կնոջ չեն հարցներ, անոր չեն դիմեր հասկնալու համար թէ՛ իրաւացի՞ են այդ ենթադրութիւնները...:

Ես կ'ուզեմ պաշտպանել իմ սեռակիցներս, եւ խնդիրը մերկապարանոց հրապարակել այս սխալներուն մէջ:

Մեր մէջ ամուսինները; որոնք ամէն առաւելութիւն ունին մեր վրայ, պէտք է ըսել որ՝ կընեն կըլլան եւ յանցանքը կնոջ վրայ կը նետեն: Թէ ինչպէս:

Ամուսին մը իր պարագոյ ժամերը փոխանակ ընտանեկան բոյնին մէջ անցնելու, սիկառ ի բերան կը մեկնի տունեն, ու հոս հոն զբօսարաններու, սրճարաններու անկիւնը, մինչեւ գիշերուան կիսուն թղթախաղով կանցնէ, դրամները կը մսխէ, եւ խիստ բարկացող վիճակին մէջ տուն կը հասնի: Կիներ կէս քուն վիճակին մէջ դուռը կը բանայ, եւ հազիւ բերանը կը բանայ յանուն իր զաւակներուն դիտողութիւն ընելու անոր անել ճամբուն նկատմամբ, ահա լուտանքները, հայհոյութիւնները, եւ ... ծեծը ծագում կ'առնեն, մինչ դուրսէն լսող մը, արդեօք ի՞նչ անտանելի կնոջ մը ինկեր է խեղճ մարդը, կէս գիշերին կը պօռացնէ կոր զաւաղը... Եւ կ'ըսէ:

Գինեմոլութեան հետեւանօք, առօրեայ զրաղումին չի հետեւող ամուսին մը՝ անկարող ընտանեկան անհրաժեշտ պէտքերուն հասնիլ, տիկնոջ հագուստ, պղտիկներուն կոշիկներու պէս անմիջական պիտոյքը չի կրնար հոգալ, տիկինը արցունքոտ աչքով դիտողութիւն կ'ընէ եւ կը խրատէ վերջ տալ իր այդ սխալ ընթացքին: Արեւալ ամուսինը, խօսելու իսկ անկարող, փոխանակ բերանը շարժելու, թեւը կը շարժէ եւ սոսկալի տակնուվրայութիւնը տեղի կուտայ դուրսէն լսողին ըսելու « ինչ ալ կնիկներ կան, քիչ մը ամուսիններն չեն կրնար շահիլ... »:

Առանց նկատի առնելու իրենց պիտոյքուն մէջ ցանցնուած ճերմակը, ամուսիններ կան, որոնք արժանիքէ եւ պատշաճութենէ դուրս ելլելով, անոր ասոր կնկան կամ աղջկան հետ թեթեւ յարաբերութիւններ կուզեն հաստատել, որուն ի տես արժանապատուութեան տէր կիներ, ձայն կը բարձրացնեն, կը բողբոջեն եւ դիտել կ'ուտան թէ՛ շատ սրտալ է այդ արարքը եւ բողբոջին անվայել: Եւ ահա այդ կարգի անպիտան ամուսիններու չորս հինգ գիշեր տունը տեղը ձգելով մեկնիլը, առիթ կ'ուտայ դուրսէն տեսողաց, կրկնելու արդեօք ի՞նչ տեսակ կիներ են ասոնք, որոնց ամուսինները կը ձգեն կը փախչին... »:

Ահա այս եւ ասոնց նման պարագաներէ ծնունդ առած սին բամբասանքներ են, որոնք բերնի ցութ եղած են անոր ասոր:

Մենք կիներս, ճիշդ գլխի կոր եւ հլու գործիքներ մեր ամուսիններու ձեռքին եւ բազուկին տակ, երբէք չենք ուզեր տեղի տալ ընտանեկան ո՛ր եւ է դիտողութեան, եթէ՝ մեր ամուսիններն ալ իրենց կարգին քիչ մը գիտնան յարգել զմեզ: Երբ յարգել կ'ըսեմ, անշուշտ, կառքին ալ կողմը նստեցնեն ինն ականարկել չեմ ուզեր, այլ կուգեմ շեշտել տանը մէջ պէտք եղած յարգանքին գործադրութիւնը, բան մը որ մեզ համար կարեւոր է:

Պիտի խնդրէի մեր Մեծայարգ Տնօրէնէն՝ Վահան էֆ. Փափագեանէ, որ իր շաբաթական ընտիր յօդուածներէն քիչ մը հեռացնէր կիին անունը, եւ քիչ մ'ալ զբաղեր իր սեռակիցներով, որոնց մէջ վստահ եմ թէ քրքջալիւր նիւթեր չեն պակսիր: Ասով անկողնակալութիւնը տեղի պիտի տար երկսեռ խրատականին, որոնց չինիչ հանգամանքը փորձով տեսնուած է արդէն:

Եթէ Սատանան Եւան չի խափեր, Ադամ մեր նախահայրը խափուած չպիտի ըլլար կնոջմէն: Նախ դուք այրեր, սատանայ մի ըլլաք, որպէս զի վերջէն ձեր լարած թակարթին մէջ չի ձգեն դձեզ:


Կիկն հաստատուիս ե

Հանակ սեռ ու խիւղ ե

Շաւ անգամ կիկն մը

Գայիկն դեմ գառնուկ մ'ե:

ԲԵՐՈՒՋ ԶԱՏԻԿԵԱՆ



Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Ասաքագար. (Գործակալութիւն) — Կը խնդրենք որ անմիջապէս մեզ հասցնէք առ կախ հաշիւը:

Պարսիզակ. — Շլմեան էֆ. ձեր վեցամսեան հաճեցէք զրկել մեզ, պարտք մը զոր ասկէ 6 ամիս առաջ վճարելու էիք:

Էրգրում. — Վ. Տ. էֆ. մեր հաշիւները զրկելնիդ կը խնդրուի:

Անասիա. — Նոյնպէս:

Ռոստոքոյ. — Մ. Ճ. արդեօք պտոյտէն դարձա՞ւ: Հանրագիտակի դրամը անմարսելի է, պէտք եղած օրինական միջոցներու պիտի դիմենք:

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

— Յաջողութեան առաջին պայմանը՝ խնայասիրութիւնն է:

— Կծու խօսքը՝ սուր դաշոյնի մը հարուածէն աւելի կը վիրաւորէ մարդկային սիրտը:

— Իրենց եօին վրայ մեծ համարում ունեցող անձինք՝ ինքզինքնին չը ճանչցող կոյրեր են:

— Մարդս որչափ ալ արժանիք ու կարողութիւն ունենայ, երբէք անոնցմով պարծենալու չէ:

— Հեղինակի մը իր աշխատութեան վրայ ըրած գովասանքներն՝ անոր արժանիքը կը նուազեցնեն:

— Յաւակնոտ սնամիտութիւնը, մարդկութեան միշտ աղէտ մ'է:

— Ձեզի ու ցոյի կեանք մը, շատ հեռի է վայելք մ'ըլլալէ:

— Վայելքն ու երջանկութիւնը՝ բարոյականութեան մէջն են:

— Ուր որ խոհունակութիւն կայ, հոն կը դադրին կիրքերը գոյութիւն ունենալէ:

— Կասկածը յառաջ կը բերէ երկիւղ եւ երկիւղը սկիզբն է ամէն տեսակ հիւանդութեանց:

— Արժանիքը կը պսակուի փառքով:

— Լեզուն գործածել գիտնալը, երջանկութեան ճամբան գիտնալ ըսել է:

— Լաւ գործ մը միշտ գովելի է:

— Քիչը խնայել գիտնալու է, որպէս զի շատը շուտ հասնի:

— Տղան բնոյթով ու սովորութիւնով նախ մօրմէն կը պատուաստուի:

— Խորհելու ու գործելու տարբերութիւնները ուսմիկ մտքերու հերձուած մ'է:

— Յիշողութիւնը ինչ որ է անհատի մը համար, գրքերը նոյն են մարդկութեան համար:

— Յարատեւութիւնը՝ յաջողութեան գաղտնիքն է:

— Մտքի մարզանքը ընթերցումն է:

Թ. Մ. ԶԵՐԶԵԱՆ.

ՔՆՆԱԴԱՏ ՕՐԱԳԻՐ

ԿԵՐԱԾ ՓԱՌԱԽՈՐ ԾԵԾՍ

... ՓՈՆԱՆ ՅՕԴՈՒԱԾԻ

Տեսէք թէ ի՞նչպէս:

Երկուշաբթի առաւօտ՝ ըստ սովորականին անկողնոյս մէջ պառկած, կը մտածէի թէ ի՞նչպէս օրը երեկոյ պիտի ընէի, ու սկսայ կարդալ Նախ «Հանրագիտակիւր, ետքը օրութեան մը, եւ ապա զբաղումս լինցաւ, ժամը ճիշդ 4 1/2 ն էր: Կը խորհէի թէ՛ օրը երկուշաբթի ըլլալով, բոլոր բարեկամներս իրենց զբաղմանց մէջ, ո՞վ պիտի մտաբերէր երթալ Աշտուր տեսնելու, հետեւաբար դատապարտուած էի մինչեւ երեկոյ առանձին մընալ, — ինչ որ շատ տաժանելի բան էր ինձ համար — ճիշդ այս խորհրդածութեանց մէջ էի երբ յանկարծ դուռը զարնուեցաւ:

— Ծըռ ... ո ... ո ... թ:

— Մայրիկ դուռն է, նայէ ո՞վ է:

— Կեցիր նայի՛մ օղլում, ո՞վ է ա՛ս վախի՛դ առտանց կանուխ մուծն ու լուսուն սօխախ է ինկեր, մանճաս ալ կրակին վրայ չըլլա՛ր նէ պարէ ...:

Դռան բացուիլը կ'իմանամ:

— Օ՛ր օ՛ր օ՛ր, դո՛ւն ես Հոռոբ, բարի եկար, հրամէ նայինք, էյ քա ամա ըսի քի ասօր մուծախ մէկը պիտի կայ տէյի, զէրէ առտուն խմած խաղաղէիս ֆիլճանին վրայ, սօնսուզ աչկս կը պաղէր կոր, սանկ քովի օտան մտիր տէ Աշտուր քովը կնայ, զէրէ ան ալ տիօր իրինկուն Աստուծմէ մարդ կը փնտռէ քի էյէնմիշ ըլլայ տէյի:

Եւ Հոռոբ տուտու ներս կը մտնէ:

— Էյ քա ես վրում ինտո՞ր ես նայի՛մ, տահա օտկի չեւա՞ր:

— Փառք Աստուծոյ Հոռոբ տուտու, իշտէ սանկ նանկ կ'երթամ կոր, դուն ինտո՞ր ես նայի՛մ:

— Ինտոր պիտի ըլլամ օրդտի, իշտէ կիտցածիդ պէս ... ութը օր է Արաքսիս քիչ մը քէֆ չունի:

— Անցած ըլլայ, ինչո՞ւ, ի՞նչ ունի քի:

— Քա ես կիտեմ օրդտի, հիմակուան հիւընտութիւններն ալ մօտա է ելեր, էրկու տարի է աս վախիթները ըլլայ նէ օղկի ցաւ

մըն է ունի մէյտան կ'ելլայ, ուռմաթիզմա կ'ըսեն ի՞նչ կըսեն, իշտէ ատկից է եղեր, վրադ պարի սաղ խալչային կուլսէն, տիօր օր մատներուն ծարը, ցաւ մըն է ունի, եանի կա՞յ եա, պոնելու ըլլայ նէ, երկու աչկս էլլայ, անանկ կը տանճուի քի, ծանը տիօր էրկինք կը հասնի ...:

— Էյ հի՛շ իլաճ միլաճ պան մը չըրի՞ր:

— Քա զաւակս, աճապ չըրածս մնա՞ց...

Քեզմէ աղէկ չըլլայ, մեր տրացիներէն մէկը ըսաւ քի, կէս օխա հալիս ֆրանքուզ զէյ-թին եաղիին մէջը, հարուր տիրէ՛մ սօղլուճան տիր տէ, նոր հողէ պտուկի մը մէջ, սանկ մաղմաղ կրակի վրայ քսանը չորս սահաթ կտկտացուր, մէհէմի պէս պան մը կըլլայ, անով աղէկ մը ցաւած տեղը օրը էրկու անգամ չբէ կասնի ըսաւ, տէրախապ ըրի ֆայտա մը չիտեսանկ, որ մէկը երլանճըխ է կարդացուր ըսին, որը տըրսէվէյէ, տէօրթ եօլ աղզիէն չորս քար առ՝ կտոր մը կարմիր չայ շէքէրի՛ կտոր մըն ալ թօզ շէքէր, իրէքը մէկ քուրչի մը մէջ կապէ տէ, իրէք օր պարցին տակը դիր, ետքը ծովը նետել տուր ըսին, ան ալ ըրինք, էյ Աստուծու զօրքին մեռնի՛մ, հի՛շ մարիկ, հի՛շ, ֆայտա մը չը տեսանք քի:

Մայրս խօսք առնելով:

— Հոռոբ տուտո՛ւ, հի՛շ աղջիկդ Պուրսա տաք ճուրերուն խրկեցի՞ր:

— Աղջիկս, ատիկա պաշխասիներն ալ ըսին, ըսին ամա, ատանկ պաները բարա՞յով կըլլայ, մենք ըսես նէ ահ կէլէյիտին:

— Էյ քա մեղայ, վա՛յ մեղքիս, էրիկդ նէճիէ կիսուդ թէբէն, թող անդին ասդին իյնայ տէ պան մը ճարէ ...:

— Էրիկներ հանէ տէ կօռ պէ կօռ էլլայ հէմէն, հա մարիկ, օր մըն ալ սանկ շէնք շնորհք, Հոռո՞բ, զըզըմըզ նասըլ օլտու տէյի հարցուցած պիլէ չունի քի, կա՞յ մի անոր ան զըխըմ էլլալիք ըռախին ...:

— Էյ չէ, աֆ կընես ամա, ատ ալ քաշուելիք տէրտ չէ:

— Ի՞նչ ընեմ օրդտի, սեւ օր սեւ սահաթ է էղեր քի տէմս հաներ են, չը հասնէր չը կատարէր էրիկ ըլլալու:

Սօսքերին ընդմիջելով:

— Էյ Հոռոբ տուտու, հի՛շ հէքիմի չի ցուցուցի՞ր:

— Քա նայէ ի՞նչ կըսէ, ես պէքեարէմ կ'ըսեմ՝ նէ ան օլուխ չօճուխտան նէ հապէր կ'ըսէ, օղլում ատանկ պաները բարայով կըլայ բարայով:

Դեռ խօսակցութիւնը պիտի շարունակուէր երբ՝ ցրուիչը պատուհանէն ներս նետեց օրուան թերթերը — շարթուան միակ ընկերներս — ամէնէն առաջ ձեռքս կառնեմ օրաթերթը, որուն առաջին էջին մէջ ուշադրութիւնս կը գրաւէ սա վերնագիրը « առտնին դեղագիրներ » եւ երբ կը պատարասուիմ կարդալու, Հոռոր խօսք առնելով.

— Ինծի նայէ օղլում, թօհաֆ պան մը կայ նէ պարսը կարդայ տէ մենք ալ մտիկ ընենք, զէրէ աս ղազէթաճիններուն մէջը մէկը կայ հօրը մօրը մէկ հատիկը, Փափագին տղան կըսեն կոր ի՞նչ կըսեն կոր, էյ անանկ պաներ կը գրէ կոր քի, եանի կայ եա կարդալու ըլլաս նէ կը ճարթուիս խընտալէն:

Մինչ այսպէս կը շարունակէր՝ ես կ'ընդմիջեմ, ու կսկսիմ կարդալ.

— « Ոտքերուն շատ քրտնելուն համար 100ին տասը համեմատութեամբ Ասիտ քրօմիկ »:

Հոռոր բարձրաձայն խնդալով՝ մօրս.

— Հա՛ հա՛ հա՛, քա մտիկ ըրէ, նայէ չըսի հիմա, աս տղան մեր Կօմիկին ոտքերուն շատ քրտնիլը ո՞ւր տեղէն իմացեր է, եանի կայ եա՛, բէք հինտ ու ֆէլէք մէկը ըլլալու է ...:

Մայրս կռահելով թէ Հոռոր բան մը չէր հասկնար:

— Հոռոր տուտու, աս ան ղազէթան չէ ասոր օրաթերթ կ'ըսեն, ոտքերուն շատ քրտնելուն համար իլաճ սալըխ կուտայ կոր:

— Է՛յ քա ատիկայ հէքիմի ղազէթա՞ն է ի՞նչ է, է՛յ եանի անանկ պան մընէ նէ աման զաւակս քէօլէդ ըլլամ, տիխատը կարդա տէ, աղջկանս համար իլաճ մը կայ նէ մէջը ընենք:

Եւ ես կը շարունակեմ: « Գլխու թեփերուն դէմ ... գիտնալ թէ ծնելիք տղան մա՞նչ է թէ աղջիկ ... »:

— Քա վայ մեղքիս, տահա ինչե՞ր պիտի կտնան աճապ ...:

Դարձեալ կը շարունակեմ, « Բօմաթիզմայի դէմ »:

Հոռոր ահաճները անկելով՝ աչքերը պիչ պիչ բերնիս մէջ յառած՝

— Ի՞նչ ըսիր ... ի՞նչ ըսիր, բամաթի՞զմա, թամամ, իմ աղջկանս հիւընտութիւնը, աման օրդտի ծոխմ օղքերդ պաքնեմ տիխատը կարդա տէ նայինք ի՞նչ թարիֆ կուտա կոր:

Երբ կը վերջանայ ընթերցումը, Հոռոր կը խնդրէ ինձմէ թախանձագին թղթիկի մը վրայ գրել եւ իրեն յանձնել այդ « traitement »-ը յայտնելով թէ՛ նոյն իսկ այդ օրը պիտի փորձէ իր աղջկանը վրայ, եւ որու կը հետեցընէ շարք մը աղօթքներ, եւ առած թղթիկը՝ կը մեկնի:

Ճիշդ չաքաթ մը վերջ, ցերեկուան ճաշը ըրած գաւաթ մը գինիի զգլխիչ աղդեցուլ թեան տակ՝ երբ անոյշ քուն մը կը քաշէի, դռան զանգակին տրուած ուժգին հարուած մը սթափեցուց զիս, եւ որովհետեւ մայրս նոյն պահուն դուրս ելած էր, հարցուցի սպասուհիին.

— Բիօս ինէ՞ Էլէնի:

Քանի մը երկվայրկեան լուռութենէ վերջ, այս կ'աւետէ.

— Ի մատամ Հոռոր.

— Աս էրթի մէսա կը պատասխանեմ, որուն արդէն առանց սպասելու Հոռոր ներս կը մտնէ շտապաւ, եւ քրտնաթաթաւ, նման պզտիկները գողցուցած վագրերու:

Ի տես այս, տարօրինակ եւ անակնկալ այցելութեան կը հարցնեմ.

— Ի՞նչ է ատ Հոռոր տուտու, ատ ի՞նչ հիյէթ է:

— Ձե՞ս խընիր կոր տէ՛ մէյմնալ ի՞նչ է ան տէյի կը հարցունես կ՞ը:

— Ինչո՞ւ, ի՞նչ եղաւ քի:

— Էօլիւլիթ քէօրին եղաւ, ծօ՛ դուն հիչ Աստուծմէ վախ ըսած պանդ չունի՞ս քի, մօրդ տեղը կնկան հետ էյլէնմիչ ես եղեր հէ՞, ատ էտէպսիզութան ալէմը ի՞նչ պիտի ըլլայ:

—

— Ճուղապ չես իտար կոր, խապահաղըտ կիտես կոր, անանկ չէ՞, կիտի սէնի սըմսըխ, չը հասնէիր ատ թուղթը գրելու տէ ծառքս տալու, ամա ան չէ, խապահաթը իմա է քի, քեզի պէս խազ պէյինլիները մարդու տեղ կը դնեմ տէ պան կը հարցու-

նեմ, աղջիկս շաբաթ մընէ տանձիկ տանձիկ կը տանձուի կոր, տանձուիս հէմպն, ինտոր ալ ծառքդ վրայ կնաց տէ ատ սուտ իլաճ-նեքը գրեցիր, զագէթայէն է տէյի, հէ՞, իշալլահ դուն ալ անոր տառօսին կուգաս, սըյրըխ միւսիւպէթ:

— Ինծի նայէ Հոռոբ տուտու, բերնէդ ելած լախըրտըն կիտցիր:

— Վա՛յ, միւսի՛ւ աֆ կ'ընես, իմ սիրտս կերի կոր ծո՛, չը կիտնամ նէ ի՞նչ կ'ընես:

— Հի՛չ, իշտէ քեզի ասխըտար կ'ըսեմ կոր, ինծի խըրսլաթմիշ ընես նէ ետքը գէշ կ'ըլլայ:

— Ի՞նչ կէշ մի կըլլամ, ետվաշ կէշ, ծո սինէք բէյլիվանի, տուն մարդուն ի՞նչ կըր-նաս ընեի քի, սըմսը՛խ, սըմսը՛խ:

— Է՛յ տահա չօգտեց, սըմսըխ աէյի որի ես ճա՛տը:

— Մո՛ ինծի ճա՛տը հա:

— Գեզի եա՛:

— Ըրածդ չօգտեց մէյմնալ հախարէթ, ճատը՛ հէ՞ ... չա՛թ:

— Ա՛յ ... Հոռո ...

— Չա՛թ ...

— Բա խեն ...

— Բա՛թ ...

— Թե ... ցար ...

— Բա՛թ ...

— Ամա՛ն, ամա՛ն, մայրիկ ... հասէք ...

— Սո՛ւս, հիմա հողիդ պերանդ կը պե-րեմ հա, առ ճատըն աէ նստէ վար:

Իմ օգնութիւն հայցող աղաղակներէս եւ եղած աղմուկէն դրացիները կը հասնին, եւ հազիւ կրնան Հոռոբին ձեռքէն զիս ազա-տել ... որուն վախճանը կ'ըլլայ իմ փառա-ւոր ծեծ ուտելս եւ Հոռոբին ֆօթօպին գըլ-խէն ելնելը, եւ մազերուն ցիւր ու ցան երե-սէն վար իյնալը, եւ ի նախազգուշութիւն երկրորդ արպէտայի մը չտապաւ ժեկնիլը, կարգ մը չուտանքներ ծամծուկելով բերնին մէջ:

Ճիշդ երկու ժամ վերջ, երբ ալ մտքերը հանդարտած էին, սկսայ լրջութեամբ մտա-ծել թէ՛ ի՞նչ կրնար ըլլալ պատճառը որ այս ծայր աստիճան հըւ կինը գազան դարձու-ցած էր, կարծելով թէ իրեն յանձնարար-ուած դեղը սխալ է, զոր չուշացայ երեւան հանելու:

Հոռոբ, իր աղջկան Rhumatismeի դեղը ըրած ժամանակ զայն մտեցուցած էր, ինչ որ օրաթերթին մէջ մոռցուած էր յանձնա-րարել այս ամենակարեւոր կէտը, եւ իրա-ւամբ ալ փորձուած է թէ, չը ներգործեցէ զատ հիւանդութիւնը կը կրկնապատկէ ...:

Ամէն պարագայի մէջ անմեղ զո՛հ մը ե-ղած էի այդ դեղին երեսէն:

Չեմ գիտեր թէ այդ յօդուածը հրատա-րակողը ինչո՞վ պիտի սիրաշահէ զիս փո-խան յօդուածի կերած ծեծս:

Բանկալթի

ԱՇՈՏ ԲԻԹԱՊԱՆԱՆ

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԵՐ

Պասկերին առջեւ՝ — յիշատակ սիրուն — ,
Ձոր սիրողները կը պահեն միայն,
Կիւն մը ծնրադրած, աչերն սեւեռուն,
Աղօթքը կ'երգէ իղձերուն ունայն:

Մեղեդին անոյշ կը բարձրանայ վեր .
Հոռոբիւնն ահեղ կը դողայ յանկարծ,
Երբ ձայնը կ'երգէ « ո՛վ բարեգութ Տէ՛ր,
Կ'ուզե՛ս որ քեսկեմ անոր վերադարձ:

Յոյսս եւ անիկայ, ապաւե՛ն ինծի .
Պտուղն եւ սիրոյս անցի՛նջ օրերուն:
Չաւկի սերն կ'ըզգան արեւն կանաչի,
Զ'իկայ անգին գանձ՝ զաւկէ մը սիրուն:

Թո՛ղ կամի՛ր ըլլայ, անրեւն ո՛վ մեծ Տէ՛ր,
Բայց մայր մ'եմ գրա՛, քոյր ե իմ հոգին ...
Երգը ընդհատեց կիւնը՝ անձնուէր,
Սպասելով յուն՝ Աստուծոյ կամիին:

Անձնուիրութեան կուտքն են մայրեր,
Իրենց ապերախս զաւակաց համար:
Բայց կիւներն երբեմն ունին խօշ կիրքեր,
Որով կ'ընեն միշտ գ'իրենկ ապիկար:

ՍՏԵՓԱՆ ԽԱՉԱՌԻՆԻ

ՆԻԻԹԵՐ ՈՒ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

Վերջերս նորէն խնդիր եղաւ մեր մէջ ամուսնութեանց քիչնալուն պատճառը: Գընալը մէջ կատարուած հարսանիք մը առիթ տուաւ տեղւոյն քահանային որ նամակ մը գրէ Բիւզանդիոնի եւ դրամոփտի դրութիւնն պարսաւէ իբր չարիք ու ամուսնութեանց նուազման պատճառ: Տէր հայրը իրաւունք ունի: Դրամոփտը օրուան չարիքն է, ամէն ամուսնանալու միտք ունեցող երիտասարդ, նախ վերերէն թոփ կ'ըսկըսի, դիրքին համեմատ, 500 ոսկիէն դուռ կը բանայ, որպէս զի 200 ոսկին գլուխնայ:

Բայց չեն մտածեր թէ՛ այն որ դրամի համար կ'ամուսնանայ իր առաւելութիւնները եւ պարտականութիւնները կը ծախէ:

Եթէ գործդ, աշխատութիւնդ չի ներեր որ պատուաւորապէս ընտանիք մը պահես, քեզ ընտրէ այնպիսի կին մը որ իր գործով, կարողութեամբ, առաքինութեամբ ճանչցուած է:

Դրամոփտը շատ շուտ կը կորսուի շահագիտութեանց մէջ, ու դրամի համար առած տգեղ, անտաղանդ կինդ ձեռքդ կը մնայ, դրամը կը կորսուի, բայց տաղանդն ու առաքինութիւնը ոչ:

Լաւ գիտցէք թէ՛ դրամով եղած ամուսնութիւն մը օրհնուած չէ: Արդէն երջանկութիւն չի խոստանար, միթէ կ'արժէ՞ կեանքի երկար շրջան մը անցունել այնպիսի կնոջ մը հետ, որ իր հարստութեամբ կը պարծի, քու վրադ առաւելութիւններ ձեռք ձգել կ'ուզէ: Իրենց դրամով գոռոզ կարգ մը կիններ կան որոնք ապուշներ են, եւ երբէք իրենց ամուսնոյն արժանի կիները չեն ըլլալ:

Քանի քանիներ իրենց կնոջ քահանայը գոհացնելու ստիպուած են, անոնց գերին դարձած պարզապէս, անոնցմէ գումար մը առած ըլլալուն համար պսակէն առաջ, գումար մը՝ որուն կէսը հազիւ կը մնայ կամ չի մնար պսակէն, հարսանիքէն վերջ:

Եւ կը զարմանամ թէ ինչո՞ւ ծնողքներ վրայ դրամ կուտան: Իրենց աղջիկները ամուսնացնելու համար, միթէ իրենց տան մէջ այնչափ անպէտ մէկն է իրենց աղջիկը որ

իրենցմէ ելլալու, ընտանիքէն բաժնուելու համար վրայ դրամ ալ կուտան. ինչ նախատինք աղջկան մը համար այս պարագային:

Դրամով ամուսին գնել, ու լաւ ալ գիտնալ թէ՛ աւելի դրամի սէրն է որ ամուսնութիւնը յաջողցուցած է եւ ոչ որտի:

Այն մարդը որ իր կեանքը շահիլ սկսած է, պարտի գտնալ կին մը որ բոլոր հոգովը, մարմնովը, աշխատութեամբ իրեն կապուի: Արդ, դրամը այս պարագային կնոջ կուտայ տարբեր դիրք մը, պատուար մը կը դառնայ անկեղծ սիրոյ դէմ, միշտ կասկած կը ներշնչէ երկուստէք, այրը միշտ կըստիպուի գաղափարներն ու սովորութիւնները զոհել իր կնոջ իններուն, անհամաձայնութիւնը անխուսափելի կը դառնայ:

Ինչպէս որ պայքար մղուեցաւ ալբոյսմոլութեան դէմ, թող գրչի մշակները երկրորդ պայքար մըն ալ մղեն դրամոփտի դէմ, որ ընտանեկան աւելի վտանգներ կըսպանայ մեզ: Ամուսնութեանց նուազումը միթէ լուրջ խնդիր մը չէ՞, ինչո՞ւ պատճառները չ'որոնենք եւ չի վերցնենք:

Հ. ՊԵՏՐՈՍ

ԾՈՒՂԱՐԿԱԽՈՐՈՒԹԻՒՆ

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԳԱՅԻԱՆԷ Կ' ԱՅՎԱՏԵԱՆԻ

Անցեալ Շաբաթ օր Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ հանգուցեալ Տիկին Գայիանէ Կ. Սյվատեանի յուղարկաւորութիւնը, նախագահութեամբ Գեր. Տ. Մկրտիչ Եպիսկ. Վահագետեանի, որուն շուրջ կը գտնուէին վարդապետներ, քահանաներ եւ դպիրներ:

Մեռելական արարողութիւններէն վերջ՝ նախագահ Սրբազանը բեմ ելլելով՝ յուզիչ դամբանականով մը վեր առաւ հանգուցեալ Տիկինը բարեմասնութիւններն, իբր տիպար մայր եւ քրիստոնեայ կին, ուրիշ վերջ մեռելական թափոր կազմուելով՝ դազաղը փոխադրուեցաւ տեղւոյն գերեզմանատունը, ուր մարմինը ամփոփուեցաւ ընտանիքին յատուկ դամբարանը:

Ծուղարկաւորներու խումբն եւ հատընտիր բազմութիւնը որ դազաղին կը հետեւէր, իրենց վերջին յարգանքը եւ ցաւակցութիւնները յայտնեցին պարագայներուն:

« Հանրագիտակ » այս տխուր առթիւ իր խորին ցաւակցութիւնը կը փութայ յայտնել իր Մեծայարգ Պաշտօնակցին Բիւզանդէ Գ. Քէչեանի, իր զօքանչին վիճակած այս դառն կորստեան առթիւ, ինչպէս նաեւ բոլոր սգակիր պարագայներուն:

ՏԻԿԻՆԸ ՏՈՒՆ ԶԸ ՀԱՒՆԻՐ

Ընտանեկան ո՛ր եւ է դժբաղդութեան մ'առթիւ, յաճախ տեսնուած է թէ, հայ կիներ շատ հազուագիւտօրէն օժանդակ հանդիսացած է համերաշխօրէն գործակից լինել իւր կիսուն, իրրեւ ճշմարիտ ընկերուհի:

Այրերուն համար ամուսնական կեանքին մէջ գրեթէ անպակաս են հոգեկան ցաւեր ու տառապանքներ, որք մեծագոյն մասամբ արդիւնք են արդի շուայլ ու փուճ ծախքերու, զորս կանայք կը գործադրեն իրրեւ նորաձեւութիւն, առանց նկատի առնելու անոնց պատճառած չարիքները, որոնցմէ հարկւարաւոր տուններ կը քանդուին, մատնուելով թշուառութեան ու աղքատութեան անողորք ու ցաւալի վիճակին:

Այս տողերը գրելու հարկին տակ կը գտնուիմ ամուսնոյ մը տրտնջալի խոստովանութենէն, որ խեղճը քանի անգամներ ապաշաւելու հարկին տակ գտնուած է ամուսնացած լինելուն համար, եւ պատճառը միայն իւր կինն է, որ իւր գիտելիութեամբ, արտաքոյ կարգի ունեցած ցուցամոլութեամբ կատարեալ փորձանք մը դարձած է իւր ամուսնոյն գլխուն, որ այս ընտանեկան ոչ նախանձելի դիրքին չը գիմանալով՝ կազերու եւ կռիւներու տակ ընկճած, խեղճը հիւանդութեան մը սուր ճիրաններուն խաղալիքը դարձած է:

Տիկինը սակայն, գիտնալով հանգերձ իւր ընկերոջ ինչ դժուարութիւններով ապրուստ ճարելը, ու գիտնալով միեւնոյն ատեն ալ անոր հիւանդոտ վիճակը, որ կրնայ զոհուիլ բարկութեան մը, դարձեալ չը շեղի իւր բնոյթէն, իւր ցուցամոլութենէն, ու ամենուն վերայ ալ կելլայ նոյն իսկ չը հաւնի յայն տունները, որոց մէկ տարեկան վարձքին հազիւ կը համապատասխանէ իւր ամուսնոյն տարեկան վաստակին կէսը, ու ամուսինը իւր կնոջ Եւայի այդ չքնաղ ծաղկին փափաքին ակամայ գոհացում տալու համար, փողոցէ փողոց, թաղէ թաղ ինկած, տուն կը փնտռէ իւր նազելիին հաւնեցնելու համար, զիջանելով նոյն իսկ չափէն աւելի՝ գումարներ տալ, ընկճելով պարտքերու տակ, գէթ իսալքելու, փրկուելու համար ընտա-

նեկան դժոխային վէճերէ ու անտանելի կեանքէ մը:

Այս եւ այսպիսիներ դժբաղդարար մեր մէջ ցանցառ թիւ մը չեն կազմեր այսօր, հակառակ ունենալնու քիչ մը կարգալ գրեթէ գիտցող օրիորդներ եւ տիկիներ, որոնք թերթ մը կարդալէ եւ վէպի մը չորս հինգ հատորները աւարտելէ յետոյ լմնցնեն, ալ ինքզինքնին կը կարծեն բրօֆէսէօն մը, միշտ գիտեն ու այլ եւս իրենց մէ ուրիշ ոչ մէկը կարող է բան մը ըսել իրենց առջին: Այս թերուսները, ըլլայ աղջիկնութեան միջոցին՝ ըլլայ հարսնութեան, մէյմէկ փորձանքներ կը դառնան իրենց գտնուած մեծերուն գլխուն միակ գիտեմ՝ ճիւղութեամբ, չը հաւնիլ, չը հազուիլ պարզ, իրմէ ո՛ր եւ է քիչ մը նիւթապէս վար վիճակ մը ներկայացնողի հետ չը տեսնուի, հոգ չ'է թէ ան նոյն իսկ իր քոյրը լինի:

Ասոնց զբաղմունքն է, դարդ, պճնանք, ցուցամոլութիւն եւ կարգ մը տնաւեր ու քանդիչ նորանոր սովորոյթներ, հոգ չ'է թէ մօտ ժամանակէն իրենց յարկին մեծը նիւթակտն եւ բարոյական անկումի պիտի մատնուի, որո՞ւ հոգ, տիկիներն քէյֆն է այս:

Օրիորդներ, դո՛ւք որ ռահվիրաններն էք ապագայ տիկնութեան, դո՛ւք որ սահմանուած էք տուն կազմել, եւ կառավարել ընտանիքներ, դո՛ւք որ կոչումը ունեցած էք մայր լինելու (քիչ մը դժուար պիտի լինի այսօր) միթէ աւելի լա՞ւ չը պիտի լինէր, փոխանակ սին ու փուճ զարդերու, տնաւեր ու թշուառութիւն հրաւիրող նորանոր սովորոյթներու՝ պարզութեան, համեստութեան, եւ նամանաւանդ տան մը կառավարութեան համար սահմանուած գիտելիքներով ձեր մտքի պաշարը օժտէիք, օգտակարին վատնելով ձեր այն ժամերը, ինչ որ այժմ մեծ մասամբ (բացառութիւնները յարգելով) ձեր բարոյական անկումին կը շուայլէք թէպէտեւ անգիտակցաբար. դո՛ւք, որ ամուսնութեան մէջ երջանկութիւն կերպգէք, եւ ասլա յուսախաբ կը լինիք, պատճառը, միայն ձեր յոռի դաստիարակութեան վերաբերեցէք, զի դաստիարակեալ կիներ, աղջիկ ու առաքելի եղող ընկերուհին է միայն, որ պիտի կրնայ կեանքին լաւագոյնը վայելել այդ վեհ ասպարէզին մէջ:

Գ. Մ. ԱՐԲԱՍԵԱՆ

ԱՂՋԻԿԸ ՔԱՆԻՈՎ ԿՈՒՏԱՔ . . .

(ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Ամէն անգամ որ չեմ գիտեր ինչ պոչի ցաւ է կարգացողներէն չըլլարսի մը զիս ծամծմել ուզէ, ջրդիկ գրականութիւնը մշակելու մէջ տեղ կը նետէ, յուսալով որ ատով անուանարկած կըլլայ զիս (°), եւ թէ ատով ալ չի գոհանալով, շոգենաւներու մէջ, հոս հոն դէմերնին ելողին՝ հնդկահաւի պէս ետ առաջ ծռելով գլուխնին՝ կսկսին «կարդացիք . . . թերթին մէջ Վ. Փափազեանին համար գրուածը . . . աղուոր շիներ քին հէ. . . . Մինչդեռ այդ չըլլարսիները չեն գիտեր թէ՝ Վ. Փափազեան ըսուած մահկանացուն թէլ մը մազ չի կորսնցուներ իր իսկութենէն, քանի որ լսող կամ ընթերցող ժողովուրդը լաւ կը ճանչնայ զիս, զիս որ ոչ ուէքլամէ կը չլանամ, ոչ ալ անուանարկիչ հրատարակութիւններէ կ'առնուիմ: Ասալ իմ մեղքէս:

Պէտք է ըսեմ որ, հինգ տարիէ ի վեր անընդհատ շարունակած գրական ճիւղս իր պարզութեան մէջ հետեւող մը չունենալէ զատ, մշակող մ'ալ հասցուցած չէ: Ես կը գրեմ այս ջրդիկ ոճը, ու պիտի գրեմ, ուղղելու համար այս ոճը չի հաւնողներու տոտոները, որոնք քաջ գիտեմ թէ այս լեզուն կը հասկնաս, մինչդեռ իրենց տղաքները գրագէտ (°) կտրած են հրապարակին վրայ:

* * *

Ամէն սարի այս եղանակին կարծես խօսք մէկ ըրածի պէս, մայրեր՝ կը թեւաւորուին կարգելու իրենց ծանր քնոք, որ աղջիկ զաւակ կ'անուանի:

Անոնք՝ այսինքն մայրերը, խխունջներ են կարծես, որոնք իրենց պատեանէն դուրս ցցուած, փէշերնին քսքուտելով հոս հոն կը սլքտկան կեր մը ձեռք ձգելու մարմաջով: Այս պարագան երբէք չամթոլիր ըստ իս, քանի որ սքաթիսքիք մեզ կը ցուցնէ թէ՝ օրուան կիները աւելի հակամիտ են հգ ծընելու քան թէ արու:

Նկարագրականը զոր պիտի հրամցենք հոս վարը, պատկեր մըն է, զոր կանցնի միջակ դասակարգէն ընտանիքի մը սաշոն ըսուած սենեակը, դուր կարգաւ նստած են մէկ քանի կիներ, տարեց, միջակ եւ երիտասարդ, որոնք կը խօսուրուտին տաքօրէն:

— Էյ աղեկ եա, աղջկանս տիպը վրոն, ատտար սըխը ֆըխը կը հարցունեն կոր նէ, տէլիխանըն նասը՛լ է . . .

— Ը՛նհ . . . բիլիճներու կտոր, պոյլու, օմուզները լան . . .

— Աղեկ ամա՞, սըռըխ համալի ընելու չեմ, փեսայ պիտի առնեմ . . .

— Հա՛ ամա, օմուզները լան ըլանէ առողջութիւնը տեղը կըլլայ եղեր, անանկ կըսեն կոր հէքիմները . . .

— Էյ վաստակը՞ . . .

— Խանութ մը ունի քի, ներս մտնալու ըլլաս նէ աչկդ խարարմիչ կըլլայ ըսպառչա մալերը ձմրան փատի երզնի պէս . . .

— Աչկը ի՞նչ ըռենկ է . . .

— Էլա՞ տէ, պոչով պոչով, սանկ մէյ մը նայելու օր ըլլայ նէ, վրադ փուշ փուշ կըլլայ . . .

— Պըյըխները՞ . . .

— Խումալին իլէն եալապուխին օռթան տէ թարն ի վեր տառցած կատուի պոչի պէս . . .

— Իմացածիս նայելով մէկ ոտքը սար-լաընթըրը կը քալէ եղեր . . .

— Հի՛ . . . վայ մեղքիս, քա չէ եալ-րում ան քալուածքին կուստօն է, հիմա-ճուկուան մօտաներէն կը քալէ տէ ան է . . .

— Քալուածքին մօտան ալ չէի տեսէր . . .

— Հապա՞ . . . սօխախէն անցած վախ-տը բիւթիւն բէնճիրէներէն շորի պէս վար կը կախուին քի տեսնան տէյի տէ, հիմա հոգի մը ունիմ տամ պիտի, հաւը ճուր կը խմէ վեր կը նայի, աս տղան աչկին խալա-խը չի խախտէր . . . առջին կը նայի կեր-թայ . . .

— Աս ամէնքը աղե՛կ . . . Ի՞նչ կուզէ կոր . . .

— Էյ կիտէ՞ք եա, հիմաճուկուան զան-
ցան միւճէրրէտ աղջկանը հետը պան մը
տալ սահմանուած է, շատ չէ ամա՛, կէնէ
ինչ գիտնամ ... երկու հարուր մը կուգէ
կոր ...

— Քա ի՞նչ կըսես Մարեկէնէ տուտու,
երկու հարուր ...

— Էյ դուք ի՞նչ տալու միտք ունիք քու-
րուկ, զարար չունի, աս բազարլըխ է, տը-
ղուն գործին գա՛յ նէ պիտի առնէ ...

— Մեղայ, զահէր աղջիկս պիթ բազարի
մալ էր ... աս տղան կնի՞կ կառնէ կոր չէ-
նէ մի արսա ...

— Հախ ուն՞ս ամա, հիմաճուկուան աղ-
ջիկները անտար սիւսերնուն մէռաք կուտան
կո՞ր քի, զաւալը տէլիխանլըները դրախ-
մա կուգեն կո՞ր քի մասրաֆնուն դէմ տան
տէյի ...

— Ը՛նէ ... իմին Նառդուհիցաս անտար
ալջախ կէօնիլլի է քի տաւաչպուռ հագնի
նէ իքվին թէքը վեր չառներ ...

— Անանկ է, անանկ է եա՛վրուս ամա՞,
ի՞նչ ֆայտա, օրէնք է քի տղան փարայ առ-
նէ ...

— Էյ իրաւցունէ մենք ալ հիշը չպիտի
հանէ՛նք եա ... իշտէ տիրէկ մը տուն,
վեց խաթ չամաշիր, պաղնիքի թախըմ,
դուրսի ներսի երկերկու խաթ ֆիստան,
մատին մատնի, կէօքսին պոօշ, անկճին օղ,
ինծի կուգայ քի հարն ալ կռատի ֆօսօնի
թուղթ մը պիտի տայ ...

— Քա աֆ կընես, ֆըռէնկճէ չեմ հաս-
կընար ամա, կիտնալըս փարայի տայիր բան
մըն է ըսածըդ քուրուկ ...

— Հապա, չիյտեմ քանի հազար դրուչի
բիանքօ ... էյէր ելլայ նէ ...

— Հա՛ ... էյէր էլլայ նէ ...

— Հա՛ եա՞, էյէր էլլայ նէ ...

— Ան չէ ամա սա ալ հարցունեմ քի օ-
րորդը քանի՞ն կայ ...

— Օխտնին չէյրէկ կայ ... քա բէքթօ-
հաֆ ես, սահաթ կը հարցունես կոր ...

— Չէ սանքի ... քանիին մէջն է, տա-
րիքը կուգեմ կոր ...

— Նայէ քի ըսեմ, բաթլիճանին պօլ
տարին Նառթուհիցայուս սէպէպլի էյի, ան-
կէ պէրի քանի՞ տարի եղաւ քի ...

— Քա քուրուկ բան մը կըսես կո՞ր քի,
ամէն տարի բաթլիճանը պօլ է, ո՞ր թարի-
խըն է րսածըդ ...

— Քա իշտէ տահան կայ, վրան խազի
խանաւորը շարխաները ո՞ր տարին մօտա ե-
լաւ, իշտէ ան տարին էր քի բորըս պերնիս
հավէս ըրի տէ, ելայ Պէյ օղլու գացի,
հաթտա՞, ատ օրը մէտէս քէչի պոյնուզի
ուգեց տէ, Յակորճան աղան տասը խանութ
մօտաւ, անճախ իրեք կտոր գտաւ տէ պերաւ
քի աշկս պացուեցաւ ...

— Քա ճանըմ պէլլի է քի շատ տարօք
չէ աղջիկը ամա, չիտակը ըսելու է, չիւնքիւ
հիմաճուկուան տէլիխանլըները, ժամուն եա-
զըճին հինգ դրուչ կուտան, քիւթիւկէն
հանել կուտան կոր խայտը, մէյէր հոն գըր-
ուած կըլլայ եղէր ...

— Ինծի նայէ՞, անոր մարը մոմճի կընիկ
չէ քի ժամը խայտ ունենայ ... ալթըխ
բիւթիւն բիւթիւնէ սաբըթմիշ կընեն կոր...
ի՞նչ տեղը կայ քի ժամուն եազըճին աղ-
ջըկանս տարիքին խայտը ունենայ ...

— Ինչ է նէ, ան չէ եա ըսելիքս, տղան
կուգէ կոր քի աղջիկը պալըխ էթլի ըլլայ ...

— Ատ թառաֆէն չիւպհէ չունիմ, նա
Պիստոսը թող ըսէ, անցած օր պաղնիքը
տեսեր էին տէ հազար մաշալլահը մէկ ըրեր
էին, հա իս տեսեր ես հա աղջիկս ... ա-
նիկա իմին թագէս է ...

— Էյ, ինչուս պէտք, առնողը չի խաբ-
ուիր, մէրսինի պէս վուճուտ մը ունի աղ-
ջիկնիս, կըսէ նստողներէն մին խօսքի մէջ
մտնելով ...

— Պօյը չի հարցուցի քուրուկ, քանի՞
մէթոօ է ...

— Էյ ինչտար ա՛վազ ունիմ նէ պիտի
պօռամ արթըխ ... քա աս առապայի պէ-
կի՞ր է քի չափէք պիտի ... ինչ ընէղիւլ-
թին է ...

— Հապա, հիմակուանները բիւթին պօ-
յին, լանքին չափը կուգեն կոր ...

— Չահէր մեռելին անտուկը հազըր ընեն
տէյի հա՞ ... չի հասնին չափելու, վայ
մէղքիս, քա մարիկ, մեր վախիթը ասանկ
բարակը նայել կա՞ր, խըլտըր խալայ կը տես-
նային, կառնէին կը լըմբննար, հիմա քառ-
սուն էլէկէ կանցունեն կոր քա՞ ...

— Էյ հապա հասկնայ քի, թեւը զարնէտէ դուրս մը ելլայ նէ վայլէ, հէմ ատէ-
թը ան է եղէ՞ր քի, աղջիկը տղէն չորս մատ
վար պիտի ըլլայ եղէր . . .

— Տօղրամաճիին թող երթայ ուզածին
պէս մէջէ մը կտրել տայ տէ թեւը թող
զարնէ պտըտի, ես անանկ մըզիւռայով աղ-
ջիկ չունիմ . . .

— Աղեկ կըսես ամա քուրը՞ս, անէքի
տղան կընիկ պիտի առնէ նէ, հէլպէթտէնէ
կուզէ քի, քիթը պերանը, պօյը պօսը . խօս-
քը խօրաթան, ըռէնկը մըռէնկը, ճիւլէն
միւլէն տեղը ըլլայ . . .

— Քեզի կարճ լախըռտը մը ըսե՞մ, ես
կարգելիք աղջիկ չունիմ, էյէր օր քիմ ատ
ըսածներդ բիւթինն ալ վրան ըլլա՞ր նէ,
շիմաճուկ կարգած տէ թոռան ալ տէր ե-
ղած էի . . . չէ պապամ չէ, թող մնայ աս
գործը . . .

— Տուք կիտէք, եանի բէք ալ փախ-
ցունելիք պան չէր աս խըսմէթը՞ ամո՞ . . .
մալը ձերն է, ես եկայ հասկնալու քիմ աղ-
ջիկը ֆանի՞ով կուտա՞մ տէյի . . .

— Պասմա բէշով մը պիլէ չեմ ի տար,
չիւնքիւ ատ տղան աղջիկ չուզէր կոր, ա-
ւետարանէն երես մը թուղթ կուզէ կոր,
խուսուրսուզ հաթիմ պիթիմ . . .

— Էյ կեցիք բարով քուրուկ, սէպէ քի
հիչ աս պանը օտթան չիգայի պէս պոնեցէք
տէ, չըլլայ քի անոր ասոր ալ լախըռտը
պանաք . . .

— Մեղայ, ինչո՞ւ չպիտի ըսեմ, ծանս ե-
լած, ավազս հասած տեղը պիտի նախըմ
քի, աղջիկս ուզեցին տէ չի տուի տէյի . . .

— Էյ վայ մեղքիս, ուզեցինք տէյի մե-
ղաց տէ՞ր եղանք . . .

— Ձէ ամա, գիտե՞ս եա՛, տայնա տայ-
նա կալ, մանչուն թառաֆէն ուզել տէ՛,
աղջկանը թառաֆէն ալ կէրի թէփմիշ ը-
նելը շան ու չէրէֆ մըն է աղջկանը . . .

— Ը՛նհ . . . ան իմացողը պիտի ըսէ քի
տղուն թառաֆէն քիթ չեն քաշեր տէյի . . .
դուք գիտէ՞ք ամա, աս գործը եայմիշ չը-
նէք նէ աղեկ կըլլայ, չիւնքիւ, աղջկանը
պօյը իմ մըզիւռայիս ուղղուն չեկաւ . . .
կիտէ՞ք եա՛ . . .

— Ես չարչի պօյին կըխը չէյթան

պէզի չեմ ծախեր կոր, պըտըրճիին պէս
աղջիկ կուտամ կոր, թող աչկերնին զօրա-
ծին խըտար կան, նային չափեն, ձեւեն,
առնեն չառնեն բապուճս պիլէմ չէ, հէրիք
է քի մօր լմանուկ զաւակ մը ունիմ, երբ որ
է նէ ծառքէ կը հանեմ . . .

— Էյ կեցէք բարով, ըսել է քի ասանկ . . .
ույմիշ չեղաւ . . .


— Չեղաւ նէ չեղաւ օխճութին, դուն
պըտըտէ պըտըտէ՞ աէ նորէն կաս նէ մենք
աս տունը ենք, կուզես նէ նիւմէոսն ալ
առ անանկ կնայ . . .

Այսպէս միջնորդ ջատուկը կը մեկնի տու-
նէն, ուրիշ տեղ կրկնելու համար իր յան-
կերգը՝ աղջիկը քանի՞ով կուտաք . . .

Արդեօք կարելի է երեւակայել ասկէ
աւելի տգեղ սովորութիւն մը, ամուսնու-
թեան պէս սուրբ ու նուիրական խնդրոյ մը
առթիւ։ Մեր երիտասարդ միւսիւները, ո-
րոնց ապագան ապահովելու միակ եւ միմի-
ակ յոյսը դրամօթիտն է, երբ ամուսնանա-
լու ելլան, Ղալաթիոյ պօստան կը յիշեցնեն,
աղջիկ զաւակներու բիացային հետ խաղա-
լով։

Հաւատացէք, երբ խելահաս մայրեր, ի-
րենց աղջիկը կարգելու մէջ երիտասարդ
ըսուած պարոնը ձեռքէ ձեռք խելու ան-
մըտութիւնը չի գործեն, օր կուգայ յորում
ամուսնական բարքերուն հետ հարցումն ալ
կը փոխուի՝ տղան քանի՞ կուտայ։

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ



ՇԵՈՐՀԱԻՈՐԱԿԱՆ

—

« Հանրագիտակ » իր ջերմ մաղ-
թանքներն ու շնորհաւորութիւնները
կը փութայ մատուցանել՝ Տպագրական
Տեսուչ ՎՍԵՄ. ՔԷՄԱԼ ՊԷՅԻ, որ իր
ուղղամիտ պաշտօնավարութեան իբր
վարձ արժանացած է Ա. կարգի Մէ-
ճիտիէ պատուանշանին։

ԻՄ ՄԵՐԸ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Երբ աղջիկ մը սեւուկ աչքով,
Ցատկէ խնդայ ու գայ իմ քով
Ու ըսէ ինձ քեզ համար ո՛հ
Կը մեռնիմ ես միշտ սըրտով գոհ:
Գիտցէ՛ք որ դեռ ես չեմ սիրեր:

Երբ նայուածք մը ազդու դիւթող,
Հանէ սիրտըս ու հոգիս դող՝
Որ տառապիմ սիրատուհոր,
Հոգիս տալու համար խաչոր:
Գիտցէ՛ք որ դեռ ես չեմ սիրեր:

Երբ աղջիկներ այտերով վարդ
Խընդան խաղան խօսին զըռարթ,
Երբ ինձ համար անոնք այրին
Ու ես ըլլամ անոնց դերին:
Գիտցէ՛ք որ դեռ ես չեմ սիրեր:

Երբ աղջիկ մը ինձ համար միշտ
Հալի մաշի ու կըրէ վիշտ,
Ու ես իբր մարդ մը զըթոտ
Ոհ խոնարհիմ ծունկով կըթոտ:
Գիտցէ՛ք որ դեռ ես չեմ սիրեր:

Երբ խիստ հարուստ ծեր աներով
Ու մարգարիտ ակունքերով,
Առաջարկեն ինձ մէկ աղջիկ
Որուն բնաւ չեմ ըրած ճիգ:
Գիտցէ՛ք որ դեռ ես չեմ սիրեր:

Վարդ այտերով նուռ ջրթներով,
Սեւ աչքերով ու յօնքերով,
Երբ աղջիկ մը ինձի ըսէ՝
Կը սիրեմ քեզ ո՛հ ինձ լըսէ ...:
Գիտցէ՛ք որ դեռ ես չեմ սիրեր:

Քառէ կուրծքեր ու մերկ ուսեր
Որոնք համակ կը սըփռեն սէր
Երբ որ ըլլան ինձ ընտանի
Որ մարդուն խելքն զըլխէն տանի:
Գիտցէ՛ք որ դեռ ես չեմ սիրեր:

Երբ մայրիկը որ համարձակ
Թողու աղջիկն իմ քով արձակ
Ու երբ ես այս յարմար առթով,
Յայտնեմ տէրըս իմ անվըրդով:

Գիտցէ՛ք որ դեռ ես չեմ սիրեր:

Երբ ինձ համար տան երեկոյթ
Վազեմ երթամ ես շուտ ընդ փոյթ,
Ուտեմ խըմեմ զիս պարարեմ,
Երբ ազջըկան հետ ալ պարեմ:

Գիտցէ՛ք որ դեռ ես չեմ սիրեր:

Երբ խընջոյքի մէջ աղջիկներ,
Որոնք չունին խիպ ու շիկնել
Առանց մօրկան հըրամանին
Պարեն խըմեն կանչեն մանին:

Գիտցէ՛ք որ դեռ ես չեմ սիրեր:

Բայց երբ ունիմ չափ մը ոսկի,
Սիրաբոս կուտամ առանց խօսքի,
Համեստ պարկեշտ կոյս աղջըկան
Որոնց կարծեմ խըթը չի կան:

Ո՛հ այն ատեն ես կը սիրեմ:

X

Ուրեմն ով բարի մայրեր,
Ու աշխատող էսնաֆ հայրեր,
Աղջիկներնիդ ըրէք ծանօթ,
Որ վերջն անոնք չըլլան ծաղր:
Զի այս կերպով ես չը տեսայ
Որ մէկըն առնէ աղէկ փեսայ,
Հետեւանքը կըլլայ զըղջանք
Ու մինչեւ մահ անվերջ տանջանք:
Վարկենական սէրն որ բուսաւ,
Հոն կը մընայ ուր սկսաւ,
Թէպէտ ես չեմ ձեզ խըրատող
Թէրեւս ըլլաք դուք զիս ատող:

Քեռթողս մահկանացու

Սկիւտար

Ե. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Կարեւոր թաղէ մը մեզ կը գրեն թէ՝ անցեալ շաբթու պօռեկակահագործադրութիւնը կատարուած է Այս առիթն աշակերտներէն աւելի վարժարաններու պաշտօնէութիւնը օգտուած է :

— Ձեռք անցուած թղթիկ մը սա իմաստը կուտայ « զրկուած 14 պէօրէկները ՄԻՄԻԱՅՆ պաշտօնէութեան համար է », որով կը հաստատուի սա ճշմարտութիւնը թէ՝ կրթական գործին բացառութիւնը եղող պէօրէկական ալ իր զեղծումները կունենայ երբեմն (եթէ 14 հատ ալ խմբագրատուն զրկուէր՝ այս տողերը չէինք հրատարակէր թերեւս : Թ. Խ.) :

— Սկիւտարէն մեզ կը տեղեկացնեն թէ՝ օգերու սա նպաստաւոր օրերուն կարգ մը տիկիները իրենց ձմեռուան պէտքերը յետաձգած ըլլալուն՝ օ՛րհոն եւ Մառտիի վաճառատունները 30,000 ոսկի բացով սնանկութիւն պիտի հռչակեն :

— Գրականութեան համը տառադրին զարնողներու թիւը օր օրի աւելնալով լրայ է : Խմբագրատուն հասնող պալեաներով ոտանաւորները մօտ օրէն սրտքան պիտի յանձնուին : Քննել փափաքողք կրնան առիթէն օգտուիլ :

— Մեր անզուգական կատակերգակ երգիծաբան Տիար Ե. Թօլայեան, իր անցեալ օրուան ոչ անձնական կառնով, Լիթ Քիչի ռէքլամը ցրուած պահուն, անցաւալի վտանգ մը անցունելուն հետեւանօք՝ այս շաբթու չի կրցաւ փայլեցնել թերթիս սինակները : (Մենք ալ ճիշտ մասունի չունէիք որ պակասը յայտնի չըլլար. Թ. Խ.) :

— Բերայի մեր մասնաւոր թղթաւիցը մեզ կը տեղեկացնէ թէ՝ այս տարի իբր ընտանեկան գիշերային ժամանց : Խուշի ֆիթնէս ընդունուած և գործադրութեան դրուած է՝ պաշտօնական կարգին մէջ :

— Մալթիացի Տիար Համարձում Պէնէեանի չի վճարած բաժնեգրներուն հինգերորդ տարեգարձին առթիւ, խմբագրատանս մէջ 140,000 սիկառ սպառեցաւ Նոյեմբերի 7ին :

— Թաղի մը ծանօթ երիտասարդներէ մին, ամուսնանալու մասին տալիներէ ի վեր տաժած գաղափարէն հրաժարելով, կիմանանք թէ անցեալ գիշեր տնեցիներուն բացակայութենէն օգտուելով՝ սպասուհին հետ բիսի բամպուղի է խաղացեր :

— Ստոյգ աղբիւրէ կիմանանք թէ՝ մինչ կարող դպրապետ մը եկեղեցական երգեցողութիւնը քառաձայնի վերածելու կաշխատի, անդին ոչ նուազ կարող պաշտօնակից մ'ալ վաղամեռիկ 'Իուրեանը անմահացնելու փորձեր կ'ընէ . . . ոտանաւորներովը :

— Այս տարի Պիլոյ լիֆերն ու քաղաքիսը շատ նուազ էին, սակայն Շուէտ-Նորվեկիոյ ծովերէն առատ Մօրիւ ձուկ օրացուեր է : Մեծ ուրախութիւն ամէն անհոյ՝ որոնք 2-3 տարիներէ ի վեր ախր՝ կը քաշէին անխաղախ Մօրիւնայի իւղին, թէ որ կուզեն խնձորի պէս այտեր ու կեռասանման չրթունքներ ունենալ, թող կարգան դեղագործ կիւմիւշեան Լեւոն էֆէնտիի ոտանաւոր ծանուցումը կոյքին Բ. էջին վրայ :

Արտօնատէր ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆՅԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապը այլ ճատտեսի, քիւ 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՄԵՌԻՆԴԻ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ մանրէային մասերն եղան մին, ուղեղին, ողնուղեղին և ֆոսֆատներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անդուգալիկ կաղզուրիչ դեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաբոնի և Չինու համաբաւոր բժիշկներէն. չերմայէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'ըզան «ուժասպառութիւն, դալկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Անգամ մը գործածութիւնը կը հաստատէ իր անդուգալիկ յատկութիւնը:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐԲ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և գեղորէից մթերանոցներու քով:

50—16

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՈՐԵԱՆԵՐՆԱՅ

Արսնց, Կանանց եւ Տղայոց

ՊԻՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տուրանութեամբ և գիներու անմըցելի աժանութեամբ շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հազուատներու, կանանց բեղուններու և տղայոց չիք և գիմացկուն ֆոսֆորներու ճիւղ մթերք մը պատրաստ ունի, որ չերմայէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հազուատի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 շրջ. է: Գաւառներէն յանձնարարութիւնը փութով կը կատարուին:

50—11

ԶՈՒԿԸ ԾՈՂԼԸ ԴՈՒՐՈ

Կազմով վաղաւորող, չիդերով տկար Մեծ ու փոքրերուն յաւեա օգտակար. Բուժիչ, կազդուրիչ դեղ մը անուանի Եթէ կայ՝ ճրկան գուտ իւղն է անի: Եւ հրաշագործ այդ ճուղն է Մօրիւն Իր իւղն ըմպողը կ'ստանայ աւելն. Կուտայ ախորժակ, ոյժ, քուն, եւ խելոյն Կարմըրին այտեր խնձորի հանգոյն: — Բայց աւա՛ղ որ իւղին այդ Մօրիւն ճրկան Անխարդախը հոս ծախողներ քիչ կան... Հաւնագոյն տեսակն անոր, քաղցրահամ, Ծուռտի եզրերէն շիտակ, այս անգամ Բերել տուած է Հեռն Կիւմիւշեան, Որ ընթացքին մէջ մօտակայ մարան Իր դեղաբանի յաճախորդք ամեն Ուղածնուն ջափ գան, անեն ու խրմեն: Եւ — ինչպէս ամբան հեղձուցիչ տարուն «Միջատասպան»ով գրտած տնուշ քուն, — Զմբան ցրտաշունչ խիստ օրերուն ալ Կարենան առողջ կենցաղ ունենալ, Եւ միշտ ստիպուին շիտակ դիմելու: Առ. Լ. ԿԻՄԻՆԵԱՆ, ի Զարշը Գաբու:

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ԸՆՏԻՐ ԱԺԱՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

Ե Ի

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ

ՀՈՏԱԻՏ ԹԷՅԵՐ



Հ Է Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօափէններ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ չահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տուրանտութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն զգուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

30-7

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։